# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ՎՕԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/02 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 48 | հականեխիչ (անտիսեպտիկ) — ախտահանիչ միջոցներ | Բոնէքստրա | ИНТЕРСЕН ПЛЮС | «Բոն Էքստրա Մ» ախտահանիչ միջոցըիրենից ներկայացնում է երկնագույնից մանուշակագույն թափանցիկ հեղուկի տեսքով խտանյութ, որպես ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 4,0 %, ինչպես նաև ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ, այդ թվում՝ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր, լվացող ու ճարպազերծող ազդեցությամբ այլ բաղադրիչներ, կոռոզիայի ընկճիչ, ջրի կոնդիցիոներ, ներկանյութ և ապաիոնիզացված խմելու ջուր: Միջոցի pH-ը՝ 10,0 ± 1,5: Ախտահանիչ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (այդ թվում տուբերկուլոզի հարուցիչների՝ թեստավորված Միկոբակտերիում B5-ի համար և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների), Կանդիդա և Տրիխոֆիտոն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տեսակի սնկերի, բորբոսասնկերի, վիրուսների (պոլիոմիելիտ, ընդերային և արտաընդերային հեպատիտներ՝ Ա, Բ, Ց և այլն, մարդու իմունային անբավարարության վիրուս, Սարս (SARS), գրիպ՝ այդ թվում՝ H5N1, H1N1, սուր շնչառական վիրուսային վարակների հարուցիչներ և այլն) նկատմամբ: Ախտահանիչ միջոցն օգտագործվում է բուժսարքավորումների մակերեսների մշակման համար՝ հեռացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը ցանկացած նյութերից մակերեսների վրայից (ապակի, հայելի, մետաղ, կերամիկա, գորգ, կաշի, քրոմացված իրեր, բետոն, սալիկ, ռետին, պլաստիկ, վինիլ, ֆայանս և այլ, այդ թվում ծակոտկեն): Ախտահանիչ միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահպանելու դեպքում 5 տարի է, աշխատանքային լուծույթներինը՝ 41 օր: Փաթեթավորումը՝ գործարանային պլաստմասե տարա 1 լ տարողությամբ: Ունի ՀՀ ԱՆ հաստատված օգտագործման մեթոդական հրահանգ՝ առ 20 սեպտեմբեր 2016, թիվ 2880-Ա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎՕԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/02 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 48 | | | | |